ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. փետրվարի 27 թիվ 21-Ա

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.14 կետի <<ա>> ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ 1042 –Ն որոշումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում ներմարզային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին.
   1) Մրցույթի արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը [illegible] Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ.Աբգարյանին [illegible]:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արագածոտնի մարզպետի
2014թ փետրվարի 27-ի
թիվ 21-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ.Ղոնախչյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ

Ս.Հովսեփյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

----------.ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/

Ա.Հայրապետյան - << ՃՈ>> 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի ավագ տեսուչ /համաձայնությամբ/

Ա.Ղազարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Տոնոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Կ.Ժամհարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մազպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ